- *Տնտեսական ակտիվության աճի տեմպը թուլացել է՝ մարտի 15.3 տոկոսից հասնելով 10.4 տոկոսի ապրիլին (ՆՏՆԺՀ):*
- *Ոչ առևտրային զուտ դրամական փոխանցումներն ապրիլին կրճատվեցին 34 տոկոսով (ՆՏՆԺՀ):*
- *Սննդամթերքի նվազող գները շարունակել են պայմանավորել գնանկումը մայիսին:*
- *Արտահանման կազմում շարունակել է գերակշռել ոսկու և թանկարժեք զարդերի վերաարտահանումն Արաբական Միացյալ Էմիրություններ:*
- *ՀՀ դրամը մայիսին աժեռրվեց 0.2 տոկոսով:*
- *Ապրիլին բյուջեն գրանցել է 7.2 միլիարդ ՀՀ դրամի հավելուրդ՝ պայմանավորված ցածր կապիտալ ծախսերով:*
- *Ֆինանսական համակարգի կենսունակությունը շարունակել է մնալ կայուն:*

Տնտեսական ակտիվության իրական աճն ապրիլին դանդաղեց՝ հասնելով 10.4 տոկոսի (ՆՏՆԺՀ) 2024 թ. 1-ին եռամսյակում գրանցված 14.3 միջին ցուցանիշի համեմատ (գծապատկեր 1): Դա հիմնականում պայմանավորված է եղել արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալների կեսով կրճատմամբ՝ 24 թ. 1-ին եռամսյակի 30 տոկոս (ՆՏՆԺՀ) ցուցանիշից հասնելով 16.6 տոկոսի ապրիլին (ՆՏՆԺՀ), ինչի վրա անդրադարձել է ոսկու և թանկարժեք զարդերի արտադրության ծավալների աճի դանդաղումը: Հանքարդյունաբերության ոլորտում ապրիլին գրանցվեց 15 տոկոս անկում (ՆՏՆԺՀ), իսկ մշակող արդյունաբերության ոլորտի աճը նվազեց՝ առաջին եռամսյակի 47 տոկոսից ապրիլին հասնելով 27 տոկոսի (ՆՏՆԺՀ): Ծառայությունների ոլորտի աճը (չհաշված առևտուրը), որը չափավորվել էր՝ 24 թ. 1-ին եռամսյակին հասնելով 5 տոկոսի (ՆՏՆԺՀ), ապրիլին նվազեց մինչև 0.8 տոկոս (ՆՏՆԺՀ): Առևտրի ոլորտը շարունակեց աճել ապրիլին՝ գրեթե նույն տեմպով, ինչ նախորդ ամիսներին (27.2 տոկոս), իսկ շինարարության ոլորտի աճն արագացավ՝ ապրիլին հասնելով 17.8 տոկոսի (ՆՏՆԺՀ), ի տարբերություն 24 թ. 1-ին եռամսյակի 11.4 տոկոս ցուցանիշի: Ընդհանուր առմամբ՝ տնտեսական ակտիվությունը 2024 թ. առաջին չորս ամիսներին թուլացավ մինչև 13.2 տոկոս (ՆՏՆԺՀ):

Պահանջարկի կողմում՝ զուտ արտահանումն է պայմանավորել ՀՆԱ-ի 9.2 տոկոս աճը 24 թ. 1-ին եռամսյակում: Սպառումն աճել է 2.3 տոկոսով (ՆՏՆԺՀ), ինչը դանդաղել է 23 թ. 1-ին եռամսյակի 8 տոկոս աճի համեմատ (ՆՏՆԺՀ): Դա հիմնականում պայմանավորված էր ավելի ցածր հանրային սպառմամբ (ՆՏՆԺՀ): Համախառն կապիտալի ձևավորման ցուցանիշը կրճատվեց 25 տոկոսով (ՆՏՆԺՀ) և բացասական անդրադարձավ ՀՆԱ-ի աճի վրա 24 թ. 1-ին եռամսյակում:

Ոչ առևտրային զուտ դրամական փոխանցումներն ապրիլին կրճատվեցին 34 տոկոսով (ՆՏՆԺՀ), ինչը պայմանավորված էր ներհոսքերի 26 տոկոս անկմամբ: Ռուսաստանից դրամական փոխանցումների ներհոսքն ապրիլին կրճատվեց 50 տոկոսով (ՆՏՆԺՀ), ինչով էլ բացատրվում է կրճատման մեծ մասը, իսկ ԱՄՆ-ից ներհոսքերն ավելացան 14 տոկոսով (ՆՏՆԺՀ) (գծապատկեր 2): Դրամական փոխանցումների ընդհանուր արտահոսքն ապրիլին նվազեց 10 տոկոսով (ՆՏՆԺՀ), հատկապես դեպի Ռուսաստանի Դաշնություն (-3 տոկոս, ՆՏՆԺՀ) և «այլ երկրներ»

(-22 տոկոս, ՆՏՆԺՀ): Դեպի ԱՄՆ կատարվող փոխանցումների ծավալն ապրիլին աճեց 10 տոկոսով (ՆՏՆԺՀ):

Մայիսին գների անկումը շարունակում էր պայմանավորված լինել պարենային ցածր գներով: Սպառողական գների համաթիվը (ՍԳՀ) 0.3 տոկոսով նվազել է մայիսին (ՆՏՆԺՀ), ինչը ավելի քիչ էր ապրիլի 0.7 տոկոսից (ՆՏՆԺՀ): 2024 թ. մայիսին սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքների գները նվազեցին 2 տոկոսով (ՆՏՆԺՀ), իսկ հագուստի ու կոշկեղենի գները՝ 1.3 տոկոսով (ՆՏՆԺՀ): Դա չեզոքացվեվ տրանսպորտային գների 10 տոկոս բարձրացմամբ (գծապատկեր 3):

Արտահանման աճը շարունակել են պայմանավորել ոսկու և թանկարժեք զարդերի արտահանումն ու վերաարտահանումը: 2024 թ. ապրիլին 2.9 անգամ ավելացան պպրանքների արտահանման ծավալները (ՆՏՆԺՀ), ինչը պայմանավորված էր թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի արտահանման ծավալների տասնապատիկ ավելացմամբ, որի մասնաբաժինն ընդհանուր արտահանման կազմում 2023 թ. ապրիլի 24 տոկոսից հասավ 82 տոկոսի՝ 2024 թ. ապրիլին: Մյուս կողմից, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի ներմուծումն ավելացավ ավելի քան 20 անգամ, ինչի արդյունքում այս ապրանքային խմբում զուտ ներմուծման բալանսը կազմեց 1 միլիարդ ԱՄՆ դոլար: Բացի գյուղատնտեսական արտադրանքի արտահանումից (խոշոր և մանր եղջերավորներ և

բանջարեղեն), թղթե արտադրատեսակների և հանքանյութերի՝ մյուս բոլոր արտահանման տեսակներով զգալի անկում է գրանցվել, մասնավորապես մեքենասարքավորումների և տրանսպորտային միջոցների մասով: Չհաշված թանկարժեք և կիսաթանկարժեք քարերն ու մեքենասարքավորումներն ու տրանսպորտային միջոցները (անցած տարի ամենաշատը վերաարտահանված երկու արտադրատեսակները)՝ ապրիլին արտահանման ընդհանուր ծավալներն աճել են ընդամենը 3.6 տոկոսով (ՆՏՆԺՀ) (գծապատկեր 4): Արտահանման հիմնական ուղղությունը շարունակել է լինել Արաբական Միացյալ Էմիրությունները, որը եղել է ոսկու և թանկարժեք զարդերի արտահանման հիմնական ուղղությունը: Ներմուծման մակարդակը պահպանվել է բարձր (ապրիլին աճել է երեք անգամ, ՆՏՆԺՀ), ինչը պայմանավորված էր նաև թանկարժեք և կիսաթանկարժեք քարերով:

Չափավոր արժևորման ճնշումը ՀՀ դրամի վրա՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ շարունակվել է: Մայիսի վերջին ՀՀ դրամը 0.2 տոկոսով արժևորվեց ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ ապրիլի վերջի համեմատ, և 4 տոկոսով արժևորվեց ռուբլու նկատմամբ (գծապատկեր 5): 2023 թ. սեպտեմբերից ի վեր գրանցված կայուն անկումից հետո միջազգային պահուստները մայիսին ավելացան 30 միլիոն ԱՄՆ դոլարով (2.6 ամիս ներմուծման ծածկույթին համարժեք):

2024 թվականի ապրիլին գրանցվել է բյուջեի ռեկորդային՝ 47.1 միլիարդ ՀՀ դրամ հավելուրդ: Հարկային եկամուտներն ապրիլին ավելացան 10.6 տոկոսով՝ անվանական արտահայտությամբ (ՆՏՆԺՀ): Սա հիմնականում պայմանավորված էր եկամտային հարկի հավաքագրման ցուցանիշի աճով (47 տոկոս, ՆՏՆԺՀ), ինչպես նաև բնապահպանական հարկերի հավաքագրման ցուցանիշով, որը հիմնականում պայմանավորված էր ռոյալթիների ավելացմամբ: Մյուս կողմից, ապրիլին գրանցվել է ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և եկամտային հարկի հավաքարման ցուցանիշի անկում, ինչը պայմանավորված էր սպառման ծավալների աճի նկատելի դանդաղմամբ: Ծախսերն ավելացան 47.9 տոկոսով (ՆՏՆԺՀ), ինչը պայմանավորված էր ընթացիկ ծախսերի 82 տոկոս աճով, քանի որ կապիտալ ծախսերը 56 տոկոսով կրճատվել էին՝ պաշտպանական ոլորտի հատկացումների նվազման պատճառով: Տարեսկզբից մինչ ապրիլ բյուջեն գրանցել է 46 միլիարդ ՀՀ դրամ հավելուրդ, որը անցյալ տարվա նույն ժամանակաշրջանի հավելուրդի մեկ երրորդն է (գծապատկեր 6):

Ֆինանսական կայունության ցուցանիշները պահպանվել են կայուն մակարդակում և գրեթե չեն փոփոխվել նախորդ ամսվա համեմատ: Չաշխատող վարկերը կազմել են 1,2 տոկոս: Շահութաբերությունը ըստ ակտիվների ապրիլին մնացել է 14 տոկոսի մակարդակում, ինչպես և մարտ ամսին էր, իսկ կապիտալի համարժեքության գործակիցը չնչին աճ է գրանցել՝ մարտի 19.7 տոկոս ցուցանիշից ապրիլին հասնելով 20 տոկոսի: Ապրիլին ավանդները նվազել են 0.4 տոկոսով (ՆՏՆԺՀ), ինչը պայմանավորված էր արտարժույթով արտահայտված ավանդների 0.6 տոկոս նվազմամբ (ՆԱՀ): Ապրիլին վարկերն ավելացել են 1.7 տոկոսով (ՆԱՀ), ինչը հիմնականում պայմանավորված էր ՀՀ արժույթով արտահայտված վարկերի 2 տոկոս ավելացմամբ (ՆՏՆԺՀ):

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության աճը դանդաղեց հասնելով 10.4 տոկոսի, ինչը պայմանավորված էր արդյունաբերական թողարկման կիսով չափ կրճատմամբ

(Տնտեսական ակտիվության ինդեքս, փոփոխությունը ՆՏՆԺՀ, %)

Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 2. Ռուսաստանից ոչ առևտրային դրամական փոխանցումների ներհոսքերն ապրիլին կիսով չափ կրճատվել են (ՆՏՆԺՀ)

(հազար ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 3. Գնանկումը շարունվել է պայմանավորված լինել սննդամթերքի գների անկմամբ

(ՍԳՀ գնաճ, ՆՏՆԺՀ, փոփոխություն, %)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 4. Թանկարժեք քարերի և մետաղների արտահանումը շարունակել է աճել ապրիլին

(միլիարդ ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 5. Մայիսին ՀՀ դրամը չնչին չափով արժևորվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ

(ինդեքս. 2020 թ. մարտի 2 = 100)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 6. Ապրիլին գրանցվել է բյուջեի հավելուրդ, սակայն հանրագումարում՝ հավելուրդն ավելի ցածր է եղել, քան 2023 թ. հունվար-ապրիլ ամիսներին էր

(միլիարդ ՀՀ դրամ)



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն